

Չաշմանդամություն ունեցող ընտրողների համար հասանելիության ծառայություններ

Չաշմանդամություն ունեցող ընտրողների համար հասանելիության ծառայություններ

Ներածություն

Լոս Անջելեսի շրջանը՝ երկրի ամենամեծ ընտրական իրավասության շրջանը, պատասխանատու է գրեթե 5,4 միլիոն գրանցված ընտրողների ընտրություններն անցկացնելու համար:

Մատենավարման-արձանագրումների/շրջանի գործավարության վարչությունն աշխատում է քվեարկության գործընթացը բարելավելու ուղղությամբ և կենտրոնանում է քվեարկությունը բոլոր ընտրողներին հարմար, հասանելի և անվտանգ դարձնելու համար՝ օգտագործելով ավելի քիչ սարքավորումներ և կատարելագործելով հնարավորությունները մեկ սարքում, այն է՝ «ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՆՇՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՍԱՐՔԸ» (BMD):

Լոս Անջելեսի Շրջանի ընտրողներն այժմ ունեն ավելի շատ օրեր՝ ցանկացած ընտրատեղամասում անձամբ քվեարկելու համար: Այս ժամանակահատվածում ընտրատեղամասի ավելի քան 10,000 աշխատողներ տեղաբաշխվել են ավելի քան 500 ընտրատեղամասերում: Որպես ընտրատեղամասի աշխատող՝ ձեր պարտականությունն է հավաստիանալ, որ բոլոր ընտրողները, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձինք, կարողանում են մասնակցել ընտրական գործընթացին:

Լոս Անջելեսի ընտրատեղամասերի աշխատողներին հաշմանդամության մասին իրազեկման հետևյալ ուսուցողական տեսանյութերը նախատեսված են ձեզ տեղեկացնելու այն խնդիրների մասին, որոնց բախվում են որոշ ընտրողներ ընտրատեղամասեր մտնելիս և ինչպես կարող եք օգնել նրանց քվեարկության գործընթացում, որպեսզի քվեարկությունը նրանց համար հաճելի փորձ լինի:

**Ընտրատեղամասերի աշխատողներին
հաշմանդամության մասին իրազեկման
ուսուցողական տեսանյութ (փակ ենթագրեր)**

**Ընտրատեղամասերի աշխատողներին
հաշմանդամության մասին իրազեկման
ուսուցողական տեսանյութ (Ամերիկյան
Ժեստերի լեզու)**